ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱՆԵ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ

25 նոյեմբերի 2024 թվական

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Նանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար 2024 թվականի հունվարի 11-ին կնքվել է N 3 «ՇՄՆԱՆԵ-ԳՀԱՊՁԲ-24-3» ծածկագրով Հացի մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1.1 կետով սահմանված է՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի կողմ հանդիսացող «Հովհաննես Ամիրխանյան» Ա/Ձ (ՀՎՀՀ՝ 57457159)-ն տեղեկացրել է, որ ապրանքների մատակարարումից հրաժարվում է:

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Նանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար 2024 թվականի հունվարի 11-ին կնքվել է N 3 «ՇՄՆԱՆԵ-ԳՀԱՊՁԲ-24-3» պայմանագրի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները՝ առաջարկում ենք 5 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. հոկտեմբերի 21-ը ներառյալ, ապահովել տուժանքների, մասնավորապես՝ որակավորման ապահովման և պայմանագրի կատարման ապահովման վճարների փոխանցումը 900218000132 հաշվեհամարին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի «Նանե մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը վերոգրյալի վերաբերյալ

տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով. Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող օրվանից երկու տարի ժամկետով:

Եթե մասնակիցը վճարումը է վերը նշված ապահովումները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում չի ներակայացնում լիազորված մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Լ.ԱՌԱՔԵԼՅԱՆ**